

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռ. Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ». համ Tiflis Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բարին 2 կոպեկ.

Ներկայ 1890 ԹԻՒՆՎԱՐԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդայով Մեր ստանում ենք սեփական ՀԱՌԱԳՐՈՒՄԵՐ. «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի. Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Թամարյանի տանը). Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԳՐՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Ակումբ» և թատրոն. Երևանի ներկայ վաճառականութիւնը. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՌԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսկաստանի արտաքին վաճառականութիւնը. Աֆրիկայի մի վայրերի թագաւոր. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀՆՈՒԳՐՈՒՄԵՐ.—ԲՈՐՍՍ.—ՏԵՂԵՎԱՆՈՅՑ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՁԻՆԱՂ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԱՎՈՒՄ» ԵՒ ԹԱՍՐՈՆ

1885 թ.ից սկսած՝ տարեկան մի կամ երկու ներկայացումներ են տրվում Հայոց թատրոնական ակումբի օգտին. բացի ներկայացումներից, տրվում են նաև երեկոյան և պարահանդեսներ: Ամեն անգամ հասարակութիւնը կարգում է աֆրիկաների վրա Հայոց թատրոնական ակումբը: Խոսքերը և անցումը հային յատուկ ֆելետայով, առանց իրան հարցնելու թէ՛ այս ինչ ևայնչում է:

Եւ ճշմարիտ այս ինչ ակումբ է, ովքեր են զրա անդամները, ինչ է զրանց արածը և ինչ են ուղում զրանք հասարակութիւնից: Եթէ զա պատուաւոր տիրոջն է մի քանի մարդկանց համար, այդ տիրոջը հաստատելու համար հարկ չը կայ փող հաւաքել հասարակութիւնից, իսկ եթէ զա մի հասարակական հիմնարկութիւն է, ուր է զրա գործունէութիւնը և նրա հաւաքած փողերի հաշիւը: Մենք չենք ուղում ասել, թէ այդ ակումբը՝ հաւաքած փողերը ենթարկված են որ և է վտանգի. ոչ, բայց հաշիւ տալը չէ որ

լաւ բան է: Հաւատացած լինելով որ այդ հաշիւը հասարակութիւնը չուտով կը կարգայ, մենք անցնենք խնդրի ամենակարեւոր մասին—Հայոց թատրոն չը կայ, այդ ամենքն էլ գիտեն. զիտէ այդ բանը և ակումբը:

Արդիօք այդ ակումբը՝ նպատակն է հայոց թատրոնը վերականգնել: Ել երբ Այժմ աւելի քան երբէք պահանջ է դրացվում հայոց թատրոնի, և ինչպէս լաւ ենք, թատրոնը սիրող անձինք (ոչ ակումբականներ), մտադիր են լուրջ կերպով պարագել այդ հարցով, կաղմել մասնաժողով երիտասարդ ուժերից և հաստատ հիմքերի վրա զինչ հայկական բնույթը Հաստատ ենք ասում, որովհետև նոր կազմվելի մասնաժողովը նպատակը պէտք է լինի ոչ թէ պատրաստ զբաղմունքի վրա հիմնել թատրոնը, այլ ժողովրդի համակրութեան վրա և այնպէս անել, որ թատրոնը չը դառնայ իբրև արտոնութիւն մի որոշ դասակարգի: Բայց ինչպէս անել այդ, քանի որ մի զարմանալի նախադաշարմունքով ամենքն էլ պաշարված կարծում են, թէ առանց այս ինչ կամ այն ինչ անձնաւորութեան հայոց թատրոն չէ կարող լինել: Քիչ է մնում որ ասեն, թէ եթէ հայերի մէջ չը լինէին X, Y, կամ Z. անձնաւորութիւնները, չէին լինի աշխարհում թատրոնական գրուածներ:

Բայց պիէսները կան, բեմերն էլ կան, կայ զրանց պատկանող հասարակութիւնը: Մեր մէջ կայ մի և նոյն բանը այն զանազանութեամբ, որ այդ բանի և հասարակութեան մէջ կանգնած է մի անբերնով մարմին ակումբը: անունով, որ աննշում է հայոց թատրոնի աղբիւրով և քննարկում է հասարակութիւնը սնտրի յայտով: Ուրեմն մնում է թողնել այդ ակումբը՝ իր զլլիւն, դարձնել բոլորովին երեսը նրանից և գործել հասարակական և նմանում է մի կովի, որին անասուն են կոչում:

Եթէ նրա, խղճա ինձ, զեռ շտույցս՝ չեմ կտորել... եթէ կը տաս ինձ տար փարայ, ես թեղ կորնեմ...

—Օրհնել, ծիծաղեց Սիրէյան,—պառաւ, ով է օրհնութեանդ կարօտ...

Եւ ճգեց նրան մի արծաթ մէջիդ զրամ: Պառաւր առաւ զրամը, շօշափեց, քարացաւ զարմանքից և պահ մի չը կարողացաւ խօսել: Սիրէյան էֆէնդին ուղում էր մեկնել:

—Ո՛չ, ո՛չ, գոչեց նրան պառաւը—կանգնիր, երիտասարդ, իմ օրհնութիւնս առ և յետոյ գնա...

—Է՛հ, սանց արձամարնանքով Սիրէյան, մի քանի քայլ անելով

—Լաւ ուրեմն, սանց պառաւը նրա ետևից,—գնա, Աստուած թեղ հետ և թող թեղ միշտ պահպանէ կնոջ շաւիղը...

Սիրէյան կանգ առաւ. նորէն կնոջ շաւիղը

—Լաւ, պառաւ, կինը ինչ է, որ շատ ունեւայ, նա միայն ստեղծված է մարդուն զուարճանելու և նմանում է մի կովի, որին անասուն են կոչում:

տարակ մահկանացուներին յատուկ կերպով, այնպէս, ինչպէս անում են ուսանելը և վրացիք այն ժամանակ մեր երեկոյաններից և ներկայացումներից գոյացած արդիւնքը կը դնայ ոչ թէ անբերնով (ակումբի) օգտին, այլ հայկական բնույթ օգտին, որն ազատվելով ակումբի հովանաւորութիւնից, կարող արժանաւոր կեանքով: Բաւական է ինքնախաբէութեամբ պարագել, յուսալով այն մարդկանց վրա, որոնք երբէք չեն էլ մտածել հասարակութեան մասին. լաւ և օգտակար գործը միշտ առանց զրանց աւելի լաւ կարելի է կատարել:

ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐԿԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Երևան քաղաքը, համեմատելով կովկասի ուրիշ քաղաքների հետ՝ վաճառականութեամբ Բագուից յետոյ երկրորդ տեղն է բռնում, թէ իր հում բերքերով և թէ մշտական յարաբերութիւնների մէջ գտնվելով Պարսկաստանի մեծ առևտրական քաղաքների հետ: Վաճառականութեան մէջ միշտ աջողակ է այն երկիրը և այն ժողովուրդը, որը աշխատում է իր երկրի բերքը արտահանել ուրիշ, հեռու երկրները, աշխատում է հեռուօր տեղերից սուկի ներմուծել իր երկիրը: Այս բանում Երևանը իր շրջակայքով վաճառականութեան մէջ ամենապատուաւոր տեղն է բռնում և յոյս կայ որ մօտիկ ապագայում իր համար աւելի էլ լայն ասպարէզ է բանալու եւրոպական վաճառանոցներով:

Այսօր Երևան քաղաքը իր շրջակայքով արտահանում է Մոսկովա և Լոճ տարեկան 380 հազար պտղ բամբակ՝ Ամերիկայի տեսակից և կարագէջող տեսակից: Երևանի հրապարակում Ամերիկայի տեսակը ծախվում է պուղը կանխիկ փողով 8 ռուբլի 40 կօպ., իսկ կարագէջող տեսակը 7 ռ. 60 կօպ. թիչ աւել կամ պակաս. աւելի շատ զարգացող է զարկն ամերիկական տեսակից: Միմեանք մտնում Երևանում միայն բամբակից: Երևանը արտահանում է բաւական քանակութեամբ հում կաշի, բրինձ, ցորեն, կտաւատ, մրգեղեն և տեղային խաղողից պատրաստված մեծ քանակութեամբ գինի, մանաւանդ այս վերջինը, որը շուտով կտրուպի վաճառանոցներում պատուաւոր տեղն է բռնելու, շնորհով մի քանի տեղափոխելով, որոնք գիտութեան պահանջներին համեմատ են պատրաստում վերջին տարիներում իրանց գինիների: Հաշիւով ի միասին բոլոր բերքերը՝ Երևանում մտնում է զանազան տեղերից տարեկան մօտ հինգ միլիոն ռուբլի: Սրանից մի քանի տարի առաջ բամբակի ամ-

բողջ արտահանութիւնը զկախ Ռուսաստանի քաղաքները գտնվում էր հայերի ձեռքում. նրանք մասամբ ազգայինցիք (չօկեր) էին, և տեղացիք այժմս հազիւ թէ հայ վաճառականներին աջողում է արտահանել առաջվայ արտականութեան 200/0 Այդ առևտուրը նրանց ձեռքից անցել է օտարների ձեռքը: Այսօր այստեղ Մոսկովայի, նոյնպէս և Լէհաստանի Լոճ քաղաքի մեծ առևտրականներն ունեն իրանց գրասենեակները, իրանց գործակատարներով, որոնք ուղղակի, առանց տեղացիների միջնորդութեան, առնում են բամբակը և ուղարկում իրանց գործարանները: Այսօր այստեղ հաստատել են իրանց առևտրական գրասենեակներ Մոսկովայի կարգիներին, և Ալէքսեյեւի, Լոճի Պոզնանսկի և Թիֆլիսի հայ գործարանատէր Չիթախանս:

Ինչպէս տեղեկացայ, Երևանի նահանգը օրից օր առաջ է տանում բամբակի գործը. ամբողջ նահանգի դաշտերը, սկսած Երևանից դաշտերից մինչև Արարատի ստորտը, Հին-Նախիջևանի ու Լճմիւսի գաւառը՝ բամբակի ցանքներով են պարագել: Գիւղացին պարագ չէ մնում. ինչտեղ տեսնում է ազատ և ջրաւոր տեղ, բամբակ է ցանում: Գործը առաջ տանելուն աւելի նպաստում են օտար վաճառականները. նրանք տալիս են գիւղացուն սերմ, փող և բամբակ մաքրելու գործիքներ. դա է զլլաւոր պատճառը որ այդ մեծ առևտուրը օտարները խլել են հայ վաճառականներից: Գիւղացին բամբակ հաւաքելու ժամանակ ուղղակի ծախում է օտարներին աւելի բարձր գնով, քան թէ առաջը իր առաջ հայ վաճառականը տալիս է եղել առաջից փող գիւղացուն, նա հաշիւին է եղել արտասուլի տակոս, պայման է եղել զինչիս որ ստացված բերքը ժամանակին նրան ծախէ շատ ցած գնով: Այսօր գիւղացին ազատ է թէ ծանր տօկօսից, թէ աշխատանքի համար չը վարձատրվելուց և թէ քաշի մէջ խաբվելուց:

Վերև յիշեցի որ Երևանը գտնվում է Պարսկաստանի հետ առևտրական յարաբերութիւնների մէջ: Այդ կողմից Երևանը ամբողջ Արարատականի առևտրական մեծ քաղաքների համար մի կենտրոն է կազմում. այդ երկրները բոլոր բերքերը անցնում են միշտ Երևանով, որոնք մեծ մասամբ վաճառվում են Երևանի հրապարակի վրա, և այդպիսով Երևանի ժողովուրդը ունի զրանից իր յայտնի օգուտները:

Երևանի առևտրական յարաբերութիւնները օտար քաղաքների հետ կարող են աւելի աշող և ապահով պայմաններ մէջ գտնվել, եթէ այստեղ լինէր արքունական բանկի բաժինը. իսկ զաւանակում ուրիշ բանկեր էլ կը հաստատվէին Երևանում, որոնք անուշտ կը զիւրացնէին այստե-

րէյան, կարծում էր թէ հիւրի—փէրի էր տեսնում:

Եւ հէնց զրա համար նա այդ վտանգեղեցիկութեան առջև ապշած մնաց և չը կարողացաւ մի բառ իսկ արտասանել:

Թիւրք կինը մի քրքիջ արձակեց, մի քայլ մօտեցաւ երիտասարդին և ասեց.

—Էֆէնդիւմ, փոխանակ ևտեխս ման գալու, կը հաճիս կողքուս ման գալ և ինձ մենակ չը թողնել այս բազմութեան մէջ:

Սիրէյան գտնվում էր եօթներորդ երկնքում, կարմրեց և սկսեց կնոջ կողքից քայլել, որը անդադար խօսում էր:

Հետզհետէ երիտասարդը համարձակութիւն ստացաւ և հարցրեց.

—Թանում էֆէնդին որք կինն է:

—Ե՛ս, ծիծաղեց նրան կինը—մի արբեցողի կին եմ... ամուսինս այժմ ով գիտէ որ անկրկում թաւալվել ընկել է:

—Իսկ ձեր տունը հեռու է:

—Հեռու, ո՛չ, մենք բնակվում ենք Մուլիսան Մանուկի մզկիթի մօտ... բոլորովին մենակ եմ,

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ջ Ի Ն Ա Ղ

(Կ. Պօլսի թրքական գրոյց)

Գ.

Շուրջը մի ակնարկ դեղուց յետոյ, Սիրէյան էֆէնդին մտածեց նորից կողմնակի փողոցներից անցնելով, սիրային դիպուածների ետևից վազել և կարելով Մուլիսան-Բայազիդի հրապարակը, երբ կամենում էր դէպի Թահրի-կալէի զառկայարը գնալ՝ յանկարծ լսեց մի աղիողորմ ձայն, որը օւժապառ գոչում էր.

—Կշտացած էֆէնդիններ, մի քանի փարայ տուէք անօթի պառաւիս...

Սիրէյան կանգ առաւ և իր ոտքերի մօտ նստեց:

Ամտեղ, խաւարի մէջ, կծկված մի սաւանի մէջ, նստել էր մի պառաւ կին, որը տեսնելով

երիտասարդի կանգ առնելը, քաշվելոված գոչեց.

—Էֆէնդի, խղճա ինձ, զեռ շտույցս՝ չեմ կտորել... եթէ կը տաս ինձ տար փարայ, ես թեղ կորնեմ...

—Օրհնել, ծիծաղեց Սիրէյան,—պառաւ, ով է օրհնութեանդ կարօտ...

Եւ ճգեց նրան մի արծաթ մէջիդ զրամ: Պառաւր առաւ զրամը, շօշափեց, քարացաւ զարմանքից և պահ մի չը կարողացաւ խօսել: Սիրէյան էֆէնդին ուղում էր մեկնել:

—Ո՛չ, ո՛չ, գոչեց նրան պառաւը—կանգնիր, երիտասարդ, իմ օրհնութիւնս առ և յետոյ գնա...

—Է՛հ, սանց արձամարնանքով Սիրէյան, մի քանի քայլ անելով

—Լաւ ուրեմն, սանց պառաւը նրա ետևից,—գնա, Աստուած թեղ հետ և թող թեղ միշտ պահպանէ կնոջ շաւիղը...

Սիրէյան կանգ առաւ. նորէն կնոջ շաւիղը

—Լաւ, պառաւ, կինը ինչ է, որ շատ ունեւայ, նա միայն ստեղծված է մարդուն զուարճանելու և նմանում է մի կովի, որին անասուն են կոչում:

զի ֆինանսական, առևտրական բոլոր գործողութիւնները:

Մանաւանդ այդ պայմանների մէջ կրնան իրենց արդիւնքը կանգնեցնել և կրնան իրենց արդիւնքը կանգնեցնել:

Բ. Ար.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՄ

Շուշի, յունվարի 7-ին

«Մշակի» անցեալ տարւոյ № 148-ի մէջ տրուած կայ, չը դիտել ինչ բանի վրա հիմնված, մի լուր, որպէս թէ Շուշու թեմական դպրոցը դրամական օգնութիւն է խնդրում Հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղից: Լրատու պարոնը դարձանում է թէ ինչու մի դպրոց, որն ունի 20,000 դրամահին հող, բազմաթիւ (!) գիւղերով, որը քանակից աւելի զանազան արդիւնքների աղբիւրներ ունի, որն ունի անազին դրամագումար, օգնութիւն է խնդրում Բարեգործական ընկերութեան մի աղքատիկ ճիւղից: Պարտք եմ համարում յայտնել, որ այդ լուրը հիմնովին սխալ է, մտացածին Գալոցի հողաբարձութիւնը երբէք օգնութիւն չի խնդրել Բարեգործական ընկերութիւնից և երբէք այդպիսի միտք յղանալ անգամ չէր կարող, քանի որ ամենքին յայտնի է, որ Բարեգործական ընկերութիւնը հողի և կարողանում է տարեկան երեք կամ չորս հարիւր ռուբլի մուտք ստանալ: Իսկ թեմական դպրոցի կարիքները այնքան շատ են, որ այդպիսի դուրսով օգնութիւն անել անկարելի է: Գալոցը այնքան մեծ հարստութիւնների տէր չէ, որպէս երևակայում է պ. լրատուն. 20 հազար դրամահին հողը գիւղերով զուտ անցեալ տարի վիճակաւ կաթողիլով ճրամանով յանձնվել է վիճակային հողեր կառավարութեանը և հազարաւորութիւնը այժմ մի կողմէ անգամ չէ ստանում այդ կառավարութիւնից: Ահազին դրամագումարը մի կողմացած է 14 հազար ռուբլի գումարից: Այդ գումարի տոկոսները, սրբազրամ, նըւէրներ պատկանելից և ծնողական վկայականներից, մոմավաճառութիւն և թոշակադրամ աշակերտներից, որոնց համարեա կէսը չբաւարարւեան պատճառով ձրիվարժ է: արանք են Շուշու թեմական դպրոցի բոլոր միջոցները: Լրատուն կարծում է թէ այդ միջոցներով կարելի է համալսարան պահել: Որքան և ծիծաղելի լինի այդպիսի կարծիքը, բայց դա միայն լրատուի կարծիքը չէ, շատերն են երևակայում թէ Շուշու դպրոցը անհուն հարստութիւնների տէր է: Պատճառը շատ հասկանալի է. մինչև այժմ հասարակութիւնը մոտեցում չէ ծանօթացել դպրոցի գործերի հետ և միայն զանազան շահագործողների վրա է հիմնել իր դատողութիւնները: Այժմեան հազարաւորութիւնը կը հրատարակէ ուսումնական տարվայ վերջին մանրամասն հաշիւ և այն ժամանակ շատերը, որոնց թումբ է «Մշակի» պ. լրատուն, կիմանան թէ ինչ արժէք ունեն այն երազները, որ տեսնում են դպրոցի մասին:

Հոգաբարձու Ա. Բարախանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաց գրականութիւնը անդադար հարստանում է եւրոպական գրականութեան ընտիր գըրքերով:

մի աղախին ունեմ միայն, որը այսօր առանց իմ հրամանի տնից կել և... մենակ մնացի և ես էլ վճռելի ելնիլ փոքր ինչ ման գալ:

—Շատ լաւ էք մտածել, ասեց Սիւրէյան— և թէ ներքէ ինձ, ես ուրախութեամբ կը զբօսեցնեմ ձեզ և յետոյ մինչև ձեր տունը կը տանեմ:

—Ինչու չէ, ինչու չէ, գոնց աշխուժութեամբ թիւրք կինը—բայց ես արդէն բաւական ման եկայ, այժմ փախազում եմ տուն գնալ:

—Իստում էֆէնդին կուզէ, որ մի կառք կանչես:

—Լաւ, ժպտաց կինը,—այդ աւելի լաւ կը լինի:

Սիւրէյան էֆէնդին կանգ առաւ և գոռաց մի փակված կառքի վառը մտեցաւ. երկուսն էլ նստեցին և Սիւրէյան էֆէնդին սկսեց մտածել թէ ո՞վ պիտի լինէր այդ հրաշալի գեղեցկութեամբ կինը, որը այդպէս զուրկութեամբ եկաւ ընկնելու իր գիրկը:

—Պատահա՞ր, մոմաց նա—հազարներից տասին չէ հանդիպում, բայց երևի ես այսօր շատ բազմութիւնը կը հարկաւորեմ:

Կառքի մէջ թիւրք կինը սկսեց զանազան տեղեկութիւններ հարցնել երիտասարդի մասին և երբ նրանք հասնելով Սուլթան-Մահմուդի մզկիթին կառքից ցած էին իջնում, արդէն մտերմացել էին միմեանց հետ, սակայն դուռ ևս Սիւրէյան թիւրք կնոջ գիրք ձեռքը չէր կարողացել արժանանալ:

—Գէ՛հ, ասեց նրան կինը, երբ Սիւրէյան վճարեց կառքին,—չնորհակալ եմ, բարի գիշեր, մեր տունը անա այս փողոցի մայրումն է:

Եւ ցոյց տուաւ մի նիւղ ու մուկ փողոց: —Ինչպէ՛ս, շտապեց երիտասարդը.—թողնել, որ դուք այդ մուկ փողոցից մենակ անցնէք... անշուշտ չէք նեղանալ, եթէ ձեզ մինչև ձեր տունը ընկերակցեմ:

—Ո՛հ, նեղութիւն մի կրէք, կտորտվելով պատասխանեց կինը.—ես սովորել եմ այս փողոցներին, մենակ կարող եմ երթալ: —Օ՛հ, ո՛չ, նեղե՛ք պիտի, խանդ, ես ձեզ մտադիր եմ ընկերակցել, որովհետև...

«Каспий» լրագիրը հաղորդում է, որ Անդրկասպեան երկրից անդադար մեծ քանակութեամբ բերվում է Բագու բամբակը և բուրգը: Անդրկասպեան երկրից բերվող այդ արդիւնքների քանակութիւնը այնքան մեծ է թէ Բագուի և թէ Սեֆաղաքի ամեն նաւահանգիստներում, որ երկաթուղին ժամանակ չունի ընդունել և ուղարկել բեռները, այնպէս որ բերված բուրգն ու բամբակը երկար ժամանակ նաւահանգիստներում բաց օդի տակ ընկած լինելով, սատարի փրկանում են տարվայ այս ժամանակի խոնաւ եղանակից:

«Медицинская Бесѣда» բժշկական հանդէսը հաղորդում է, որ «Ժողովրդական առողջութեան պահպանութեան» Պետերբուրգի ընկերութիւնը դիտարութիւն ունի ներկայ 1890 թ.ին բանալ մայրաքաղաքում Հի գի էն ա կ ա ն (Առողջպահական) ցուցահանդէս: Լրագիրներն ասում են, որ կառավարութիւնը նշանակելու է այդ ցուցահանդէսի համար 10 հազար ռուբլի օժանդակութիւն:

Գեկտեմբերի 15-ին Պետերբուրգում կատարվեց միտակցական ժողովրդագրութիւն, որից երեւում է, թէ մայրաքաղաքի բնակիչների թիւը հասնում է 924,106 հոգու, իսկ արուարձանների բնակիչները թիւը՝ 79,209 հոգու: Այդպիսով Պետերբուրգի աղքատակութեան թիւը մի միլիոնից աւելի է այժմ:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ կառավարական շրջաններում հարց է յարուցված Օղէտայում մի բարձրագոյն տեխնիկական դպրոց հիմնելու մասին:

Լոյս տեսաւ ԹԻՖԼԻՍԻՍԻՄ Տիրբան Նազարեանցի խմբագրութեամբ հրատարակվող «Տարազ» հայերէն պատկերազարդ ամսագրի առաջին համարը: Կովկասեան հայոց դրականութեան մէջ առաջին անգամ է, որ լոյս է տեսնում մի պատկերազարդ հանդէս. այդ պատճառով, որքան էլ պակասութիւն ունենար այդ հրատարակութիւնը, մեր կարծիքով պէտք է ներդրուի լինել զէպի («Տարազը»), որպէս զէպի հայերէն պատկերազարդ հանդէս հրատարակելու առաջին փորձը: Հանդէսի տիպը, թուղթը և արտաքին տեսքը շատ լաւ են: Մտածելու էլ վատ չեն: Բովանդակութեան մէջ իր վրա ուշադրութիւն է դարձնում հանդուցեալ Իսաֆիլի վէպը Քիֆիլիսի կեանքից («Մին այսպէս, միւսն այնպէս») վերնադրով: Պատկերներից միայն նրանք են լաւ աւելորդ, որոնց կլիշէները արտասանմանից կամ Ռուսաստանից են ստացվել, իսկ Քիֆիլիսու փորագրվածները շատ անաղիւ են դուրս եկել: Հանդէսը տպվում է խմբագիր-հրատարակիչ Տիրբան Նազարեանցի նոր հիմնված սեփական տպարանում:

Ինչպէս լուի է «Медицинская Бесѣда» լրագիրը, ենթադրութիւն կայ Ռուսաստանի մի քանի գաւառական քաղաքներում բանալ որբանոցներ, յատկապէս որբ, գտած և անհարազատ երեխաների համար:

Եւ նա մտեցաւ կնոջ, փողոցում ո՛չ ոք կար: Տիկինը յետ քաշվեց և լուրջ ու հպարտ ձայնով ասեց. —Երիտասարդ, զգոյ՛շ կաց... Երբ իրաւունք տուի ճիւղ ինձ մտեցաւ... լաւ ուրիմն, եթէ կամենում ես՝ ընկերակցեց ինձ:

Եւ առաջ զնաց զէպի փողոցը՝ առանց յետ նայելու: Սիւրէյան կտորված կնոջ այդ խօսքերից, հետեւեց նրան և մի քանի բոպից յետոյ նրանք կանգ աւելի մի դրան առջև:

—Մտաւ տանը կը լինի, ասեց կինը դուր ծնծելով.—այժմ կարող էք գնալ, էֆէնդի, բարի գիշեր:

Երիտասարդը չը շարժվեց տեղից, կարծես մագնիսացել էր. պահ մի լռեց, յետոյ ասեց մի խղճալի ճօշտով. —Պիտի ներքէ ինձ տիկին, որ պահ մը առաջ նեղացրի ձեզ:

—Հոգ չէ, ծիծաղեց կինը.—երիտասարդ ես, ներելի է... —Այժմ, շարունակեց Սիւրէյան դողդոջուն

ԿԱՐՄԻՑ ստացած երկու նամակներից քաղում ենք հետեւեալը: Ամսիս 7-ին կարսի հայ թատրոնատէրների խումբը, քաղաքային կուրբի դահլիճում ներկայացրեց հայոց ուսումնարանի օգտին Ստեղծականցի «Պէպո» և Աղաղաթի «Վայ իմ կորած յիսուն ոսկի» պիէսաները: Ներկայացուցումից զուտ արդիւնք մնաց 188 ռուբլի 40 կոպէկ: Ներկայացումը մասնակցում էին՝ տիկին Գ. Ստամբուլեան (Շուշանի դերում) օր. Ե. Մատինեան (Կէկէ), օր. Տ. Մատինեան (Սյամե) և օր. Շ. Էրամեանց (Լիլիմա): Այդ վերջին օրերը, մանաւանդ, առանձնապէս լաւ խաղաց իր դերը: Նոյն նպատակով ներկայացում կը արուի և առաջիկայ բարեկենդանին: Ժողովուրդը շատ զոհ մնաց ներկայացումից: Գահիճը լի էր:

ԿԱՐՄԻՑ մեզ գրում են. «Անցեալ օր բաւական մեծ քանակութեամբ փչացած ձուկ թափեցին գետը, նախապէս նախ թափելով ձկներին: Լուսում ենք, որ մշակներ հանում են այդ ձկները գետից, մաքրում, քացախով են լուսնում նրանց և ապա ուտում: Միթէ կարսի պոլիցիան ուրիշ միջոց չը գիտէ փչացած ձուկը ոչնչացնելու, բացի գետը թափելուց: Պէտք է ոչ թէ գետը թափել, այլ այրել փչացած ձուկը, որպէս զի աղքատ և տղէտ ժողովուրդը նախ չունենայ նորից որսալ և ուտել այդ ձուկը:

Ընթերցողներին յայտնի է արդէն, որ գեկտեմբերի 30-ին կայացաւ Պետերբուրգի մասնաւոր դրամատիկական թատրոնում հայկական երեկոյթը: Այժմ մեզ գրում են, որ գեկտեմբերի 22-ին կայացաւ մայրաքաղաքի վրաց ուսանողութեան երեկոյթը, նամանապէս յօգուտ իրանց չբաւար կերներին:

Պետերբուրգի մեզ գրում են, որ մայրաքաղաքի երաժշտական բարձրագոյն դպրոցում (կոնսերվատորիա) այս րոպէիս երեք հայ օրիւրդներ առաջին տեղն են բռնում դպրոցի երգչուհի աշակերտուհիների թումբ: Սրանք են. օր. Գեանջեանց, օր. Ջավրիվա և օր. Պապայանն: Կոնսերվատորիայի մէջ ուսանող մի հայ երիտասարդ երգչուհի էլ. պ. Մէլիքեանցով, յայտնի է իր գեղեցիկ տեսքը ձայնով և լաւ ապագայ է խոստանում:

ԱՐՄԱՒԻՐՑ մեզ գրում են. «Գեկտեմբերի 30-ին Արմաւիրի օրիւրդաց դպրոցում տօնածառ կայացաւ: Հանդէսը երգերով սկսվեց, ապա եղաւ վիճակախաղ: Մանուկներին բաժանվեցան ընծաներ և քաղցրեղեններ և ապա ըսկովեցան պարեր: Երեխաները դուրսնալուց յետոյ, զոհ արտով ցրվեցան իրանց տները: Սակայն երեխաների հետանալուց յետոյ երիտասարդներն ու օրիւրդները շարունակեցին պարերը: Երեկոյթը, առհասարակ, լաւ տպագործութիւն թողեց հասարակութեան և մանաւանդ մանուկների ծնողները վրա:»

Վիլնյայի Միլիթարեան միաբանութեան ձեռքով հրատարակվող «Հանդէս Ամսօրեայի» այս տարվայ առաջին համարը, որ այս օրերս ստացանք, արտաքին կողմից անհամեմատ աւելի շքեղ է, քան նախորդ տարիներին: Թէ տառերը,

Վիլնյայի մեզ գրում են. «Վիլնյայի միջոցով հարազատեցաւ մեզ ինչ քանի մեզ հետ խօսելու հաճութիւնից...»

—Ինչ, գոչեց կինը խտուրթեամբ—ուզում էք ինձ հետ ներս մտնել... Սիւրէյան միմիջոց աղաչաւոր ձայնով. —Հիւրի—փէրի մը ես, խանդ, բարի եղբի և խղճա երիտասարդիս:

Կինը մի քրքրել արձակեց, յետոյ ձեռքը տուեց նրան և ասեց. —Ինչ կայ, եթէ ուզում ես մտնել մեր տուն՝ համեցէք, ի հարկէ, մեր Զէֆէրը մեզ փոքր ինչ ուտելու բան կը գանի:

Այդ միջոցին դուռը բացվեց: Տիկինը ներս մտաւ և Սիւրէյան ուրախութիւնից շլմած՝ հետեւեց նրան:

(Կը շարունակվի)

Սիւրէյան էֆէնդին կանգ առաւ և գոռաց մի փակված կառքի վառը մտեցաւ. երկուսն էլ նստեցին և Սիւրէյան էֆէնդին սկսեց մտածել թէ ո՞վ պիտի լինէր այդ հրաշալի գեղեցկութեամբ կինը, որը այդպէս զուրկութեամբ եկաւ ընկնելու իր գիրկը:

—Պատահա՞ր, մոմաց նա—հազարներից տասին չէ հանդիպում, բայց երևի ես այսօր շատ բազմութիւնը կը հարկաւորեմ:

Կառքի մէջ թիւրք կինը սկսեց զանազան տեղեկութիւններ հարցնել երիտասարդի մասին և երբ նրանք հասնելով Սուլթան-Մահմուդի մզկիթին կառքից ցած էին իջնում, արդէն մտերմացել էին միմեանց հետ, սակայն դուռ ևս Սիւրէյան թիւրք կնոջ գիրք ձեռքը չէր կարողացել արժանանալ:

—Գէ՛հ, ասեց նրան կինը, երբ Սիւրէյան վճարեց կառքին,—չնորհակալ եմ, բարի գիշեր, մեր տունը անա այս փողոցի մայրումն է:

Եւ ցոյց տուաւ մի նիւղ ու մուկ փողոց: —Ինչպէ՛ս, շտապեց երիտասարդը.—թողնել, որ դուք այդ մուկ փողոցից մենակ անցնէք... անշուշտ չէք նեղանալ, եթէ ձեզ մինչև ձեր տունը ընկերակցեմ:

—Ո՛հ, նեղութիւն մի կրէք, կտորտվելով պատասխանեց կինը.—ես սովորել եմ այս փողոցներին, մենակ կարող եմ երթալ: —Օ՛հ, ո՛չ, նեղե՛ք պիտի, խանդ, ես ձեզ մտադիր եմ ընկերակցել, որովհետև...

և թէ նկարները ցոյց են տալիս պարզ կերպով որ միաբանութեան տպարանը ծաղկած զրու- թեան մէջ է։ Հանդէս Ամսօրեան» արտասահմա- նեան հայ ամսագիրներէն ամենից կենդանի է. նրա մէջ նկատուում է կենդանութիւն և ճշգ- րութիւն համապատասխանելու ժամանակակից մի- օրդանի պահանջներին.— բայց և այնպէս այդ ձգտումը դեռ չէ հասել այն կէտին, որ կարե- լի լինէր բաւարար համարել «Հանդէսի» բո- վանդակութիւնը։ Մեզ զարմացում է, թէ ինչու Վիեննայի միաբանութեան այդ օրգանը համա- բնա ոչ մի խօսք չէ ասում թիւթաքանայի մա- սին, և այն հարցերի մասին ընդհանրապէս ու- բոնք այժմ այնքան սերտ կապված են թիւթաքա- նայի հետ, և որոնք անպակն նրա ինքն տալիս նոյն իսկ եւրօպական մամուլին։ Մեզ թվում է թէ «Հանդէս Ամսօրեան» կարող է դառնալ բո- վանդակութեան կողմից մի շատ հարուստ ամ- սագիր.— և այդ պատճառով էլ մենք նրանից սպասում ենք այն, ինչ որ ուրիշ արտասահմա- նեան ամսագիրներէն երազել անգամ չենք կա- րող։

Մեզ հարցորում են, որ Պարիզի հայոց կոյո- նիայի, զլուստրապէս երկրասարգութեան մէջ, ջերմ ցանկութիւն է առաջ եկել հիմնելու այն- տեղ մի հայերէն ամսագիր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ Ե՛ր ԳՐՈՒՄ Ե՛ն. «Մօտ մի ասար- վայ ընդհատումից յետոյ, այստեղ նորից սկսվում է ժողովրդական զրբերի հրատարակութիւնը, և շուտով լոյս կը տեսնի «Արեւիկա» անունով բաւական ընտիր գրքովը»։

Յունվարի 12-ին Փիլիպիտի օպերային թատրո- նը, որտեղ խաղացվում էր «Կեանք» օպերան, յօգուտ երգիչ Կորաստաշիվիտու, կատարելապէս յատարել էր։ Կորաստաշիվիտու լաւ ձայն ունի Կեանքի համար, մի քանի տեղ նա մինչև ան- ցամ զօրեղ տպագրութիւն է թողնում.—բայց և այնպէս նրա բնէնֆիսին թատրոնը լոյրորովին դատարկ էր։ Կրա պատճառներէն մէկը անկաս- կած այն էր, որ այդ օրը կօնցերտ էր նշանակ- ված Արտիստական ընկերութեան մէջ։

Այս օրերս վրաց աղքատ զրականութեան մէջ աւելացել է մի նոր գիւրք, այն է վրացի բնաւ- կան գրող Մուստաօվի «Շղթաներ» պիէտայի վրացերէն թարգմանութիւնը։ Թարգմանողը մի հայ է, Հաննաղաբեանց աղքատուհու։ Արարիտ- լի է, որ հայերն էլ սկսել են նպաստել վրաց զրականութեան բարգաւաճմանը։ Մի հայուհի վրաց ամսագիր է հրատարակում, մի ուրիշ հայ վրաց մեծուկ մէջ է աշխատում, երրորդը զիրք է թարգմանում, և այնն բայց վրաց զրականու- թեան համար աշխատելը, չենք կարծում, որ ի- բարեւոյց տար այդպիսիներին հայերէն չիմանալ, և ծնունդունակ լինել մայրենի լեզուով մի երկու բառ գրել։ Մի փոքրիկ օրինակ, այդ նոյն «Շղթ- թաներ» գրքի վրա, որ հայ թարգմանիչը ուղար- կել է մեր խմբագրութեան, գրված է կտորտած ձեռքով նետնալը։ «Մշակի» խմբագրա- տունի, Ա. Բ. Ա. ին ազգայն և անց»։ Պէտք է նկատել, որ այդ հայկաբանը գրքի թարգմա- նին է...

ԱՍՏԻՍՏՈՒՅԻՑ մեզ գրում են. «Յունվարի 11-ին կայացաւ մեր նոր կազմակերպված Գումայի ա- ռաջին նիստը։ Քաղաքապետի անձնատեսչան Ն. Տէր-Գրիգորեան, բանալով նիստը, շնորհաւո- բեց ձայնաւորներին իրանց ստանձնած նոր պաշ- տօնը և այնուհետեւ լուրջ կերպով բացատրեց ի- բանց պաշտօնի նշանակութիւնը Ապա Գուման ձեռնամուխ եղաւ նստի համար նշանակված հարցերի ըննութեան. նախ կազմակերպվեց վա- ռութեան շտաբը և վերջապէս կայացաւ նոր քա- ղաքապետի ընտրութիւնը։ Քաղաքապետի պաշտօ- նի համար երեք կանդիդատներ կային. Արաբա- ջեան, Ն. Տէր-Գրիգորեան և Մեփիստի Այդ վե- ջինը հրաժարվեց թեկնածութիւնից։ Քաղաքա- գլուխ ընտրվեց Նիկողայոս Տէր-Գրիգորեան և նա Նախկին քաղաքապետը ստանում էր 1200 ր. տարեկան ուժիկ, իսկ այժմ Գուման վճարեց քա- ղաքապետին տարեկան միայն 1000 րուրի ու- ճիկ տալ։

ԱՐԳՆԱՆԻՑ մեզ գրում են, որ ցուրտը այդ- տեղ սարսափելի է. արևի մայր մտնելուց յետոյ

և առաւօտները ցուրտը (ըստ Ռեովիտի) հասնում է մօտ 30 աստիճանի։

Ատարախանի թեմի մի քանի տեղիւրից մեզ անդադար նամակներ են գրում, որ իբրև թէ քահանաները հրահանգ են ստանում թեմի ա- ռաջնորդից գրվելու մի հայ թեմի և տարածե- լու այդ թեմերը։ Գիտարանում ենք հաւատա- այդ հրեշտար լուրին, և կիմէ այսօր, երկու ա- միս այդ մասին տեղեկութիւն ստանալուց յետոյ տպագրում ենք այս նկատողութիւնը, միայն այն նպատակով, որ հաննք առաջնորդ Մուստաֆայի նպատակով այն անհամ զրուկներին, որը մէջ նա ընկնում է հասարակաց կարծիքի առաջ այդ տեսակ լուրերի պատճառով։ Ամեն մի առաջ- նորը իրաւունք ունի պաշտօնապէս տարածել միայն մի օրգան, այն է Էջմիածնի պաշտօնա- կան (Արարատ) ամսագիրը. ուրիշ որ և է հրա- տարակութեան համար պաշտօնական գրութիւն- ներ և հրահանգներ տալը առնուազն առաջնոր- դի իրաւունքներից (այս պէտք է իմանան բոլոր առաջնորդները) զօրու է, և մեզ համար, կըրկ- նում ենք, զժուր է հաւատալ, որ Մուստաֆայի նպատակով նման փոքր ի շատ կըրկված մարդ իրան թոյլ տայ պաշտօնական հրահանգ- ներով տարածել այս կամ այն թեմերը։ Մենք անուշաղբութեան կը տայինք այս բոլորը, կիմէ լուրերը Մուստաֆայի նպատակով չը վե- բարեբեր, և շատ ուրախ կը լինենք, կիմէ այդ լուրերը հերքվին...

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թարիզի ֆրանսիական հիւպատոս Պ. Պէրնէ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրու- թեան զրկած իր տեղեկագիրներէ մէջ հետեւեալ տեղեկութիւններ է տալիս, որ առաջ են բերում արտասահմանի լրացրները։ «Պարսկաստանի մէջ վաճառականութեան համար նոր ճանաչանք բացուած են այս վերջին տարիներ յորձ հետէ ուսու կառավարութիւնը արգելեց կովկասի վրայով վաճառները փոխանցումը (transit) և անդը- կասպեան երկաթուղին չինցի կովկասի ճանա- պարհին արգելուիլ այս հետեւեալ ունեցաւ որ Պարսկաստանի կենդանի զրկուող բաւական թիւ քանակութեամբ վաճառներ, որոնք յառաջ թիւթ- լիս-Գալիթի ճանապարհով կը զրկուին, սկսած են զրկուիլ այժմ Տրապիզոնի վրայէն, կամ Պու- չիլին և Պարսկական ծոցի այլ նաւահանգիստ- ներէն, ինչպէս նաև Պաղտատ-Համատանի գծով։

«Սնդրկասպեան երկաթուղու բացուիլը աւելի մօտ ժամանակի գործ է, քան թէ կովկասի փո- խանցման ճանապարհի արգելուիլը. բայց այդ երկաթուղու բացուիլը աւելի մեծ հետեւեալներ ունեցած է և աւելի արագորէն Ամբողջ Խորա- սանը, մի վաճառուց ուր 1 միլիօնի չափ սպասողներ կան, այժմ միմիայն ուսուական ներ- մուտքութիւնների (importation) հարկատուն դար- ձած է և այդ ի վնաս Գալիթիի Գուս չորս տա- րի յառաջ Մէջէտի մէջ ֆրանսիական շաքար կը գործածելին և շուկայները անզրկական բամբա- կեղէններ միայն կը աւանուէին։ Այդ բամբա- կեղէններ թէև աժանագին, բայց երեսի վրայ մնացած են այժմ և անոնց տեղը բռնած են Ռուսաստանէն եկածները։ Ֆրանսական շաքար- ներն ալ շուտով պիտի անհետանան, ոչ միայն Խորասանէն, այլ և Պարսկաստանի ամբողջ հիւս- սամասէն։ 1886-ին 13,387 տնտուկ շաքար եկած է, որի 4/5 մասը ֆրանսական շաքար էր։ Այս տարի 9868 տնտուկ շաքարէն 111 տնտուկը միայն ֆրանսաէն բերուած է։

«Ֆրանսայի մեծաքանակները, բրդեայ հիւս- ւածները, չուխաները, թաւիչները, ոգելից ըմպե- լիքները և նպարեղները դեռ շահաւոր կերպով կրնան մրցիլ այդ հրապարակի վրայ անգլիական, արմանական, աւստրիական և իտալական վա- ճառքներին հետ, բայց ոչ առաւանակներին հետ, որոնք զիրութեամբ և աժան դիւր կը բերուին։ «Պարսկաստանի մէջ հարողակցութեան ճանա- պարհները շատ խղճալի դրութեան մէջ են. այդ պատճառով փոխադրութեան զիններն ալ շատ սուղ են, որմէ մեծապէս կը վնասուի Պարսկաս- տանի երկրին բերքը արտահանելու մասին։ Պարսկաստանի արտահանութիւնը (exportation) և, որ ներմուտքների երեք մասն մէկին

չափ կը լինի միջին հաշուով, դժբաղդապէս հետ- դնուէ քիչնալու միտում ունի, մասնաւորապէս՝ չամիչը, ծխախոտը, գորգերը, մետաքսեղէնները»։

ԱՅԻՎԱՅԻ ՄԻ ՎԱՅՐԵՆԻ ԹԱԳԱՒՈՐ

Յունվարի 2-ին (նոր տոմարով), ինչպէս հա- զորդում է հեռագիրը, մեռաւ Աֆրիկայի Գահօ- մէ երկրի ժէլըէ վայրերի թագաւորը։ Աֆրիկայի վայրերի և բարբարոս թագաւորների թուով Գա- հօմէի թագաւորը ամենաբարբարոս միապետնե- լից մէկն էր։ Նա թէև իր ուսումը (?) ստացել էր Զրանսիայի Մարսէլ քաղաքում, բայց նստե- վայրերի զապան։ Կրօնական արարողութիւնների ժամանակ նրա հրամանով Գահօմէի աստուածնե- րին ամեն տարի բերած կենդանի մարդկանց զոհերի թիւը՝ անհաշիւ էր։ Մի ժամանակ, երբ Ամերիկայում դեռ ևս սենթի ստրկութիւն կար, ժէլըէ թագաւորը լաւ եկամուտ ունէր, մեծ քա- նակութեամբ իր սեւամորթ հպատակներին ծա- խկով Ամերիկայի, մասնաւոր Քրազլիլայի գոր- ծարանատէրերին և կալուածատէրերին։ Բայց երբ որ եկամուտների այդ աղբիւրը սպառվեց, Գա- հօմէի զապանը աւելի էլ կատաղեց և իր հպա- տակներին սկսեց աւելի էլ մեծ թուով զլլատել, իր աստուածների զոհ բերելով։ Գուս ևս 1852 թ. ևս և ապա 1877 և 1883 թ. Թերին Անդլեան և Ֆրանսիան ամեն ջանք էին թափում Գահօմէի մէջ արգելու կենդանի մարդկանց զոհաբերու- թեան սովորութիւնը.—բայց այդ բոլոր ջանքերը սպարդիւն էին անցնում։ Այս օրերս մեռած թագաւորը ամենամեծ զուարճութիւն էր, բացի մարդկանց զլլատելուց՝ ամազոնոհիներէ կազմ- ված թիկնապաճ գնդի պահելը։ Իսկ իր պալա- տում այդ զապան թագաւորը պահում էր օձերը մի անազնի քանակութիւն, որոնց ինքն էր ձեռ- ընով էր կերակրում։ Մեռածի տեղ Գահօմէի գա- նդի նստի այժմ նրա օրդի, քառասուն տա- րեկան կօնու իշխանը, որը, ինչպէս ասում են, արամաղրված է քրիստոնէութիւն ընդունելու։ Չէ կարելի չը գործնալ, որ նոյն քաղաքակիրթ եւրօպեան, որը ոչինչ չէ ուզում անել քրիստո- նեայ և քաղաքակրթութեան ընդունակ ճշգրտ- ազդերի համար.—ընդունում է Գահօմէի պէս Աֆրիկեան վայրերի պետութիւնների և ժէլըէի պէս բարբարոս միապետների օրինականութիւ- նը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Ինքնուրու առանձին ուշադրութիւն են դար- ձնում թէ քաղաքական և թէ առեւտրական շըբ- ջաններում, Չինաստանի Տիան-Յին քաղաքում հրատարակվող «Chinese Times» լրագրի առա- ջարկութեան վրա՝ կառուցանել երկաթուղու զիւր Պէնկինցի մինչև Կիբին, Մանչուրիայի վրա- յով Ինքնուրու հաւատացած են, որ այդ երկա- թուղային զիւրը քաղաքապետական մեծ նշանակու- թիւն կունենայ և կը նպաստի Մանչուրիայի ա- լելի մարդաբանի զարմնելուն։

«Վիեննայից գրում են, որ հաւանականաբար չէլիերի և գերմանացիների մէջ ծագած տարա- ձայնութիւնները կանհետանան, որովհետեւ երկու կողմի իրաւունքներն էլ յարգված են, և ապագա- յումն էլ կը յարգվին։ Ուստի զժգոհութիւնների հիմնական պատճառը վերացրած կարելի է հա- մարել։

«Պարիզի պորտուգալական կոյօնիան այս օ- րերս մի ժողով դումարելով, բողոք յայտնեց անգ- լիական կառավարութեան դէմ, ցանկութիւն յայտնելով, որ Պորտուգալեան դաշնակցութիւն կապի Ֆրանսիայի հետ։

«Հռոմից գրում են, որ Ումբրտո թագաւո- րը մտադրել է մեծ փոփոխութիւններ մտցնել տալ իտալիայի բարձրատեսիան զինուորականնե- րի մէջ, որոնք գոհացուցիչ չեն համարվում ի- րանց պաշտօնի մէջ։

«Անգլիական պահպանողական մամուլը հըր- ձուանք է յայտնում լօրջ Սոլսբրիի Պորտուգալեա- յի վերաբերմամբ բռնած քաղաքականութեան առիթով։ Ինքը լօրը շատ լաւ գիտէ, որ պէտք էր օգուտ քաղել այդպիսի դէպքերից, մի փոքր բարձրացնելու համար անգլիական հասարակու- թեան առաջ այժման մինիստրութեան անունը, որը բաւական ընկել է ներքին հարցերի տեսակե- տից։ Լօրջ Սոլսբրիի վարուցվայ խորամանկու- թիւնն է այդ.—նեքրին քաղաքականութեան ա-

նաջողութիւնները ծածկել արտաքին քաղաքա- կանութեան խաբարիկ փայլով։

«Այս օրերս Լոնդոնում տեղի ունեցաւ առա- ջին «Արեւելեան ճեմարանի» բացումը։

«Կրեալից գրում են, որ այնտեղ մեծ ապս- տամութիւն է պատրաստվում Գիւղացիները փայտում են դէպի լեռները, որպէս զի այնտեղ զինուորված խմբեր կազմին, և ժողովրդական պատերազմ սկսին թուրք զինուորների հետ։

ԻՍԱՆ ԼՈՒՐԵՐ

«Գլխուտ այժմ շատ են խոսում ծանօթների հետ պատահելիս զլխարկ վերցնելու սովորու- թեան դէմ «Pesther Lloyd» լրագրում տպվեց բժշկապետ Շտիլլերի մի նկատողութիւնը՝ ձեռնը և աշխարհ ծանօթներին պատահելիս զլուրը մերկացնելու վնասակար սովորութեան դէմ։ Ա- պա սանիտարական մասնագիտովի խորհրդական բժշկապետ Գէրցկա նոյն լրագրում գրեց հետե- վեայը. «Էս մի քանի տարի է արդէն հետեւում եմ պրօֆէ. օր Շտիլլերի այժմ լայնածաւ կարծիք- ներին Միայն յարգելի պրօֆէսորը մեզ չէ ա- սում թէ զլխարկ հանելու տեղ մենք ինչ նշա- նով պէտք է բարենք մեր ծանօթներին հանդիպե- լու ժամանակ։ Զմարտի, չէ կարելի ծանօթների, մասնաւոր տիկիներ կողքով այնպէս անցնել, կարծես թէ նրանք անմասնօժ օտարներ լինէին թոյլ եմ տալիս ինձ յիշեցնել այդ առիթով, որ իմ վէճարկեր ընկեր զօլտօր Պիեթիֆեր տեղական լրագրի յայտարարութիւնների բաժնում զեռե- ղում էր միշտ երկու տողից բաղկացած մի յայ- տարարութիւն, որի բովանդակութիւնը հետեւեալն էր. «Նոյնեքրի 1-ից ես զինուորականի ձեռով եմ բարեւում։ Ամենքը դո՛ւ էին մնում դառնով, ու- ռովհետեւ զինուորական թղթերը ինչն բոս ինքեան բարեւում ամենագեղեցիկ ձևերից մէկն է։ Մի և նոյն ժամանակ զինուորական բարեւ չափազանց զէժօկրատական է, որովհետեւ թէ ամենավերջին զինուոր և թէ զլխարկ հրամանատար միատեսակ են բարեւում։ Այդ պատճառով մենք կարող ենք համարձակ լրացնել պրօֆէսոր Շտիլլերի միտքը և առաջարկել բոլոր մեր ծանօթներին զինուորական ձեռով բարեւում։

Մի և նոյն լրագրում տպված մի ուրիշ նկա- տողութեան մէջ ասված է. «Էս կատարելապէս համաձայն եմ պրօֆէսոր Շտիլլերի մտքին՝ թէ խորովին անտեղի է ձեռն ժամանակ զլխարկը հանելով բարեւը ծանօթներին։ Գլխարկ վերցնելը բարեւը հին ֆրանսիացիներից մնացած սովորու- թիւնն է։ Հին ֆրանսիացիների մօտ միայն բարձր դասակարգի մարդիկ իբրևուրեւ ունին երկար մազեր ունեւալ, իսկ պէլեյները պարտաւոր էին մանգալ կարճ խուզած մազերով։ Պէլեյը, կիմէ չէր ուղում մեծ տուգանք տալ, պատրիցիի նետ հանդիպելիս՝ պարտաւոր էր զլխարկը հանելը, որպէս զի այդ վերջինը տեսնել թէ արդեօք պէլեյի մազերը խուզված են թէ չէ։ Ամերիկա- յում զլխարկահանութեամբ չին բարեւում։ Այն- տեղ թէ ձեռքը և թէ ամառը միմեանց բարեւում են միայն ձեռքի շարժումով։ Բոլորովին անհաս- կանալի է թէ ինչպէս այդ անմիտ, և առողջու- թեան համար վնասակար սովորութիւնը պահ- պանվում է մինչև անգամ մեր լուսաւոր դարում»։

«Յրագի» լրագրի պատմում է հետեւեալ դէպ- քը, որը ցոյց է տալիս թէ ամեն ազգի մէջ, ինչքան քաղաքակիրթ էլ լինէր այդ ազգը, միշտ գտնվում են թեթեւամիտ և դերահաւատ անձինք, որոնք ամեն տեսակ խաբէութիւնների զոհ են դառնում։ Բերլինի մի դպրոցի 6-օրը դասատան 16 տարեկան մի աղջիկը, փարձելով իր համար երկու տեսակների քաղաքի զանազան մասերում սկսեց հաւատացնել որ ինքն բժիշկ է և այն էլ կանանց հիւանդութիւնների մասնագէտ բժիշկ։ Բազմաթիւ թէ երկուստարդ և թէ ծեր կանայք հաւատացին նրան, չը նայելով որ իր տեսքով պատանին նման էլ չէր ուսում աւարտած բժիշ- կի։ Պատանին ոչ թէ միայն քննում էր հիւանդ կանանց ու նրանց բժշկում, բայց և վարձ էր ստանում իր պացիէնտներին։ Սակայն խա- բէութիւնը յայտնվելով՝ Բերլինի դասարանը դա- մապարտեց աշակերտին մի ամսվայ բանտար- կութեան»։

Որդին գրում է իր հօրը. «Արեւիկ հայր, ես սի- րեցի մի աղքատ, բայց աղիւս աղջիկ. յոյս ու-

